



67. ՔՈՍԱԿՆԵՐԻ ՈՒ ԱԽԿԱՏԻ ԽԵԶՅԱԹԸ

ՄԵ ջեղի մեջ մե ախկատ մարթ ու մե կնիկ են հըլնում: Էս ախ-
կատ մարթ ու կնիկն ունին մե դագ, մե որթիկ ու մե խատ էլ պոչը
կդրուկ սև կով:

Տեսան, որ էլ բան չունեն ծախելու, կնիկը մարթին ասավ.—Սի-
րո՛, տար դազը ծախսա՛, մե լայլուղ բե, քցեմ գլոխս:

Մարթը վերցուց դազը ու գնաց քաղաքի բազարը:

Էս քաղաքի մեջ իրեք քոսակ ախսպեր կար: Բազարի առըտուրը
վերցրեր ին հիրանց ձեռը: Ով որ մե բան բերեր, Հառեչ բղի ըտոնք
տենին, խոսին, գին դնին, ետո ծախսին: Ըստոնք դալաներ էլ ունին,
մոտ ին կայնում, բստոնց ասածները լսում ին, էթում ին մեկ էլ վա-
ճառականներին հայդնում ին, որ քոսեն «Էսենց ասավ»:

Էս Սիրոն գալում ա բազարը թե չէ, քոսակներից մեկը գալում ա
հառեչը, դազը վերցում ա, ծանդր-թեթև անում ու ասում ա.—Ի՞նչ
լավ լոր ա, ի՞նչ առժի:

Սիրոն հիմանում ա, թե էս քոսեն խանաք ա անում, ասում
ա.—Էտ լորն առժի տասար մանեթ:

Քոսեն ծծղում ա, կողի կայնուկ մարթիկն էլ են ծծղում:

—Հընչե՞ք ծծղում, —ասում ա Սիրոն:

—Բա ի՞նչ անենք, տնաշենի՛ մարթ, լորը տասար մանե՞թ կա-
սեն:

—Ի՞նչ լոր, ա՛յ քոսա, դագ ա:

Քոսեն ու էս մարթիկ էլի են ծծղում ու ասում են.—Տար ծախսա՛,
լավ էլ դագ ա:

Էս խեխմճը վիր մոտը տանում ա, ասում են՝ դագ չի, լոր ա:

Տեսավ, որ հըմմեն ասում են «լոր ա», տվեց մե մանեթի, էլ
կնդան լայլուղ չառավ, մե սաքան սեմուշկա առավ, լցեց ջերը,
չոթելով էկավ:

Տուն խասավ թե չէ, սկսեց կնդա վրեն նեղանալ:

—Ա՛յ Գալոյ ախճիկ, դու հընչի՞ ընճի խայիտառակ արիր: Լորը
բռնում, տալում ես, թե՛ տար դազի տեղ ծախսա: Տարա բազար: Ես
ասում եմ դագ ա, սաղ բազարը վրես ծծղում ա, թե. «Ղազ չի, լոր

ա»: Ես էլ տպի մե մանեթի, սեմուշկա առա, չոթելով էկա: Մեկ էլ ընձի չըխափես, հա՛:

—Այ' մարթ, —ասավ կնիկը, —խելքտ թոցրե՞ր ես, ինչ ա, ո՞րն ա տեսե, որ հընդանի լոր հըլնի: Դու զազը տարար, հըմա խափեր են, լորի գնով առե: Էտ էն քոսակների արածն ա: Ըստոնք են խոսկը մեկ արե, ժողովրթին խափում են, արբանքը հէժան ձեռից առնում են:

Մարթը համոզվավ կնգա ասածին, հըմա ի՞նչ աներ, Հո ժողովրթի մեջ խայտառակ չէր հըլնի: Հըմեն ասում ին լոր ա, մինակ հինքը ի՞մալ ասեր զազ ա: Մեկէլ օրը որթիկը տարավ բազարը:

Հէսօր էլ էկավ միյուս քոսակ ախափերը, որթիկը տեսավ, ասավ.—Էս ուն ինչքա՞ն ես ասում, ախափե՛ր:

Էս մարթն ասավ գինը: Ըստե կայնողներն ակախն հոհուալ:

—Այ' մարթիկ, հընչե՞ք ծծղում, —ասավ Սիրոն:

—Աղա՛ Սիրո, —ասավ ըստոնցից մեկը, որ Սիրոյը ճանչնում էր, —մեկ ասեր ես, մեկ էլ չասես, այ' մարթ, ուլը բազար ես բերե, ուզում ես որթկա տե՞ղ ծախես, հընչե՞ս վրեատ ծծղալ տալում:

Սիրոն ասավ, երթում ճերավ, որ հիրանք ուլ չունեն, մե կով ու մե որթիկ ունեն, որթիկը բերեր ա, կովը թողեր ա տունը: Մարթիկ էլի ծծղացին, Սիրոյը ձեռ առան, դալաներն էլ էտ ժամանակ հըմմեն առլոտուրականներին ասին, որ կասեք՝ ուլ ա: Սիրոն որթիկը վիր մոտը տարավ, ասին՝ ուլ ա, իրեք մանեթից հավելի չըտավին: Էս խեխմն իշքան ասավ որթիկ ա, ծծղացին:

—Այ' տղա, Սրո՛, կարող ա՞ հարևանի ուն ա մտե ձեր գոմը, դու վերցրեր ես որթկա տեղ բերեր ես:

Սիրոն տեսավ էլ հնար չըկա, ծախեց ուլի գնով, իրեք մանեթ առավ, տվեց իրեք սաքան սեմուշկա առավ, էկավ տունը: Էլի կնգա խետ կոփն սկավագ: Հինքն ասում էր՝ ուլ էր, կնիկն ասում էր՝ որթիկն էր: Գացին թավլեն, տեսան որթիկ չըկա, կովն հիրանց հիշկաց, մզաց:

—Տեսա՞ր, այ' մարթ, կովը մզում ա, թե՛ որթիկս հո՞ւր ա:

Էլ ի՞նչ անին, հելածը հելած էր, նորից չին կանի ետ բերի: Խեխմ մարթը մացեր էր շիվար: Մե կով ու մե որթիկ ծախեց, չըկացավ կնգան մե լայլուղ առնի:

Կնիկն ասավ.—Տար կովը ծախա՛, տե՛ս, չըխափկես: Էս անքամ էլ, որ խափեր ես, էլ տուն չըգաս, կոփկ կըլնի, յա ես կըմողնեմ կէթամ խորս տունը: Մարթ էտքան էլ միամի՞տ հըլնի:

Սիրոն կով տվեց հառեչը, քշեց բազար: Քոսակները տեսան: Ֆանդն առեր են:

Հիմի էլ մեկէլ քոսակն էկավ.—Ախապերացո՛ւ, էս որթիկը ծա-
խո՞ւմ ես:

Սիրոն տեսավ էլի գլխին օյին են խաղալու, ասավ.—Զեմ ծա-
խում:

Քոսի դալալները մեկ-մեկ թեքփան, գացին առլոտուրականների
անգաճին փստփստացին, որ որթիկ ա, կով չի: Սիրոն հիրան կովը
քշեց, գնաց բազարի էն մեկէլ ծերը:

Մեկը մոտցավ, ասավ.—Ախապե՛ր Սրո, էս որթիկը ծախո՞ւմ ես:

Սիրոն ասավ.—Ախապե՛ր Ղազո, բտոնք են քոռ, յա թե խիխմնե-
րը կորցրուկ, դու հո ծանոթ մարթ ես, բա էսի որթի՞կ ա:

—Սրո՛ ախապեր, իմ մոտը ասում ես, հուրիշի մոտը չասես, էսի
որթիկ ա: Կարող ա ուզեցեր ես կովը բերես, որթիկն ես բերե: Բե
ծախա՛, լավ գին կրտանք, ետո էլ թե կովը կրծախես, կարող ա
համաձայնվենք կովն էլ առնենք:

Սիրոն կասկածի տակ հընգավ: Հուրիշը խափա, խափա, էս ծա-
նոթն էլ հո չի՞ խափա, ուրեմն դուզ ա ասում, կովը թողեր եմ, որ-
թիկն եմ բերե:

—Լա՛վ, Ղազո՛, ասա՛, տենամ՝ ի՞նչ ես տալում:

—Տասնխինզը մանեթ կրտամ, —ասավ Ղազոն:

—Լա՛վ, քսան մանեթ տո՛ւր, տա՛ր, ծանոթ մարթ ես:

Վերչը համաձայնվան տասնըութիւնը մանեթի, կովը ծախեց:

Որ էկավ տունը, կնիկն հիմացավ, դալմաղալն սկսվավ:

—Ա՛յ կնիկ, —ասում էր Սիրոն, —դու ընձի խայտառակ ես արե,
որթիկը տվեր ես, թե տար կովի տեղը ծախա, էթանք տենանք՝
հիմի կովը թավլեն չի:

Թավլեն կով ո՞րն ա տվե: Կնիկը ոնչ լա, ոնչ ծծղա:

Մարթը մտածում ա, հինքն հիրան ասում ա. «Լա՛վ, որ կովն
էր, բա ո՞նց էր Ղազոն ասում, թե որթիկ ա: Ախար Ղազոն ծանոթ
մարթ էր, ո՞նց հիրանը խափեց: Բա որ խափեց, հընչի՞ Ղազոն կո-
վը ծախեց քոսին քսանմեկ մանեթի: Բա սաղ օրը բազարում կայ-
նուկ ա, էրկու մանեթ է՞լ օքուդ չանա»:

Էտ օրը մարթ ու կնիկ խոռվ մացին:

Հառավոտ կնիկը մարթին ասավ.—Ես ինչ կասեմ, իմ ասածը
կանես: Ես արունը կրցեմ աղիկի մեջը, կրկապեմ վզիս: Դու կէ-
թաս բազարը, քոսեքին կըբերես, կասես էտ տեսակ որթիկ, խա-
լիչա, լոր էլի ունեմ ծախելու, կըբերես իրեք քոսին էլ ու իմ վրեն
կըբռուս, կասես. «Ա՛յ կնիկ, շո՛ւտ արա, իշքան լավ բան ունենք
ուտելու, բե՛ր, թանգագին դոնախներ եմ բերե»: Ես կասեմ. «Գա-
ցեք ձեր առլոտուրն արե՛ք, ես պաղբաստեմ»: Դու կըջայնանաս,

դանակը կրվերցնես, վզիս աղիկը կրկդրես, արունը կրթափի, ես մեռուկի նման կրպարկեմ: Էտ մարթիքը կրնեղանան, թե՛ էտ ի՞նչ արիր, ա՛յ մարթ: Դու կասես. «Լավ արի»: Ետո կրվերցես զուռնեն, կրդնես հետեկս, կրփչես, ես աշկերս կրբացեմ: Ըտոնք, որ տենան զուռնի զորութունը, էլ հուրիշ բան չեն ուզի առնեն, մինակ զուռնեն կուզեն: Դու գինը կրդնես խինգ հագար մանեթ: Ես խետտ կրկովեմ, որ չըծախես, դու կասես. «Սո՛ւս կաց, կրծախեմ, չեղիկ էլ կրմութեմ, էնենց մեռուկ կրմնաս»: Դու զուռնեն կրծախես, փողը կառնենք կիթանք մե հուրիշ տեղ կաբրենք:

Մարթը համաձայնվավ ու գնաց քաղաք:

Քոսեքը հաֆկվան, որ տենան հէսօր ի՞նչ ա ծախում:

Սիրոն քոսեքին կանչեց մե յան, ասավ. —Ես տունը մե քանի որթիկ ունեմ, մե քանի ուլ, հիցցուն խատ լոր, տասար խալիչա, էլի հուրիշ շատ բան, թե կառնեք, էկեք էթանք, հըմմեն մե անքամից խոսանք, ծախեմ, պրծնեմ, թե չէ օրը մեկը բերելով, ես մե տարի չեմ կանա ըստոնք ծախի:

Քոսեքը հիրար հերես հիշկացին:

Զոչ քոսեն ասավ. —Ախսպեր Սրոն լավ մարթ ա, էթանք տենանք՝ ինչ առնելու յա կառնենք, մե բան էլ հավելի կրտանք, արթեն ծանոթվեր ենք:

Էս տեսակ Սիրոյին սիրտ տալով, գովալով էկան խասան Սիրոյ տունը: Տուն մտան, թե չէ, Սիրոն կնգա վրեն բոռաց, որ՝ շուտ ըստե խա՛ց բե, արա՛ղ բե, իշքան լավ բան ունենք, բե՛, ըստոնք իմ ամմենալավ ծանոթներն են, հառաչի անքամ իմ տունն են գալում:

Կնիկն ասավ. —Սիրո՛, դուք ձեր առդտուրն արե՛ք, խոսացե՛ք, տար որթիկները, ուկերը, լորերը, խալիչեքը նշա՞նց տու, հեսա մե սհաթ չի քաշա, կրպադրաստեմ, կրվերչացնեք, կրգաք, խաց կուտեք:

—Ո՞նց թե մե սհաթ: Ես չասի՞ ներս մտնելու հրոպեին ստոլը պաղրաստ հըլնի: Դու ընձի ինչի՞ տեղ ես դրե, որ իմ ասածը չես կատարում: Էս փափաղը թո ջետինը մտնի, էլի, որ կնիկը մարթի ասածը չի կատարա: Ես քո խոսկով բղի էթա՞մ, թե դու՝ իմ խոսկով: Էս սհաթին հըմմեն բանը ստոլի վրեն հըլնի:

Քոսեքն ասին. —Սրո՛ ախսպեր, բան չըկա, հըլա զործն անենք, ետո խաց էլ կուտենք, մաղարիչ էլ կրխմենք, մի՛ նեղացի:

—Ի՞նչ եք ասում, ես Սիրեկանն հըլնեմ, իմ կնիկը էս աղա մարթիքի հառեչը ընձի խայտառակ անա՞մ, բա էլ հընչի՞ եմ փափաղ դնում զիսիս, էն ա լաշիկ կապեմ, էլի:

Սրոն դարցավ կնգա յանն ասավ. —Հիմի, էս հրոպեին հըմմեն բան դնո՞ւմ ես ստոլին, թե չէ:

—Այ' մարթ, բան չըկա պաղբաստ, հընչի՞ ես արունք քցում, մե սհամից ետո պաղբաստ կըլնի, հէն ա մե խատ լոր եմ մորթե:

Սիրո, դու Սիրո, դանակը վերցուց, վազավ կնգա յանը:

Քոսերը ուզին բռնեն, չըխասցրին, Սիրոն դանակը քցեց, կնգա վիզը կղուց: Կնիկը հընգավ, հէսօր ես մեռե, թե հէքուց: Քոսերը տեղն ու տեղը քարցան:

—Դե գնա, շա՞ն կնիկ, հերես ես առե: Որ մե-էրկու անքամ սախծրի, ջիղում ես՝ կակա յա, ամեն օր մերտ տղա կըրերա:

Զոչ քոսեն ասավ.—Սրո՛ ախապեր, ո՞նց թե մե-էրկու անքամ սախծրեր ես, մեռելին ո՞նց են սախծնում:

—Ընձի Սիրեկան են ասում, աշխարքի ֆելը-ֆանդը ես հիմանում եմ, մեռել սախծնել ի՞նչ ա, որ չըկանամ: Հըմա ըտրան չեմ սախծնի, բոլ հելավ, էտի իմ հոքին ճերավ, թո սատկի, հոադ հընի, ես կէթամ մե հուրիշ կնիկ կառնեմ:

Հստե իրեք քոսեն էլ մեչ հընգան, աղաչին, որ Սրոն հիրանց խաթեր խրմար կնգան սախծնա, ըտուց ետո, որ կըսպանա, հիրան գործն ա՝ ուզում ա սախծնա, ուզում ա՝ չէ:

Սիրոն «չեմ, չու» յա անում, ըստոնք աղաչում են:

—Դե լավ, —ասավ Սիրոն, —ես էնքան ի ջղայնացե, որ ուզում ի էլ չըսախծնեմ, մեռնի հոադ հըլնի, հըմա որ ասում եք, ձեր խաթեր խրմար կըսախծնեմ: Ախար, շա՞ն լիզու ունի, շան լիզու: Ձեր նման աղա մարթիքը զան իմ տունը, մե սհաթ նստեն, նոր էսի ճա՞շ պաղբաստա, բա ես հընչե՞մ սադ մացե: Օրը հարիր լոր ծախեմ, հիցցուն որթիկ ծախեմ, բերեմ տունը լցեմ, որ հէսօրան օրը իմ տունը մարթ գա, բան պաղբաստ չըլնի՞:

—Բան չըկա, Սրո՛ ախապեր, բան չըկա, հո չըմեռա՞նք: Մե բեր սախծո՛ւ, ետո տեխնանք ի՞նչ ենք անում:

Կնիկը հընգուկ ա ջետինը: Նաֆաս էլ չի խանում:

Մարթը ջերից խանեց մե բալնիս, էկավ կայնավ մե զութու մոտ: Խաչակնքեց, մե աղոտք ասավ, նորից խաչակնքեց, զութին բացեց, ըստուց դուս խանեց մե զուռնա: Զուռնեն վերցուց, պիպեճը դղեց, կայնավ:

—Դե էլ ի՞նչ ես կայնե, Սրո՛ ախապեր, սախծրո՛ւ, —ասին քոսեքը:

—Ախար վախենում եմ, էլ սաղնա, դառնա կրակ, հընգնի ջանս, թո սատկեր ա, սատկի, հոադ հըլնի, էլի:

Նորից քոսերն աղաչին, պաղատին, Սիրոն համաձայնվագ: Զուռնեն բերեց դրեց կնգա հետեկին, մե «Հայր մեր» ասավ ու փչեց: Որ զուռնեն փչեց, կնիկն աշկերը բացեց:

Քոսեքը մացին չիվար: Մեշու որ փչեց, կնիկն հելավ նստավ:

Մարթն ասավ.—Հիմի ո՞նց ես, նստուկ թողեմ, էլի՞ լիզուտ չեղի չես քաշի, լի՛րի, բոլ չելա՞վ:

Կնիկն ասավ.—Սիրեկա՞ն ջան, ջանիտ մեռնեմ, Էլ քո խոսկից դուս չեմ զա, մեկ էլ փչա՛, ոտի հըլնեմ:

Սիրոն հիմի էլ զուռնեն դրեց կնգա անգձին, փչեց, կնիկն հելավ կայնավ: Էս քոսեքը քարբցեր են, հիրար են հիշկում:

Ըստե ջոչ քոսեն ասավ.—Սրո՛ ախպեր, էտ զուռնեն չե՞ս ծախի:

—Զէ՛, ախպե՛ր, էս զուռնեն դրւք չեք կանա առնի, ըստու գինը դուք որդո՞ւց կանաք տաք:

ՄԵԼ քոսեքն ասին, որ իրեքով մեկ կը հըլնեն, ուզած գինը կը- տան, զուռնեն կառնեն:

Ըստե Սիրոյ կնիկն ասավ.—Սիրեկա՞ն ջան, ինչ ուզում ես, ծա- խսա, զուռնեն չըծախսես: Կարող ա տղամարթ ես, մեկ էլ սիրտտ հե- լավ, ընձի մորթիր, զուռնեն որ ծախսես, ես մեռո՞ւկ մնամ:

—Շա՞ն կնիկ, էլի՞ դու խառնվար իմ գործին: Ես ասի, որ չեմ ծա- խում, հըմա որ դու ասիր՝ մի՛ ծախսա, քո ինատուն ես բդի ծախսեմ:

Դարցավ քոսեքին, ասավ.—Զուռնես խինգ հազար մանեթից մե կոպեկ պակասի չեմ տա: Էն էլ էս լրփի ինատուն եմ հէժան ասում, որ տանեք, ետո որ լիզուն հիրանը չըքաշա, մորթեմ ու ջան- դակը քցեմ չներին, բոլ հելավ:

Կնիկն էլի «չ, հա չէ» ասավ, մարթը դանակը վերցուց: Քո- սեքն թևից բռնին:

—Սիրո ախպեր, համփերութունը լավ բան ա, հընչե՞ս նեղա- նում: Կնիկ ա, էն էլ ա տան տեր, բա ո՞նց ես ասում, էնի ըսկի չը- խոսա՞:

—Զէ՛, կնիկը տղամարթի գործի բդի չըխառնվի, որ խառնվավ էլ, ինչ որ ասա, հակառակը բդի անես: Ես էս զուռնեն ծախսում եմ:

Կնիկն էլի ուզեց խոսա, քոսեքն ասին.—Քույրի՛կ, մի՛ խոսա, տենում ես ախպեր Սրոն ջղայնացեր ա, թո հիրան ասածն հըլնի:

Մե խոսկով, քոսեքը խանին, խինգ հազար մանեթը հաշվին, տվին Սիրոյը, չնորակալ հելան գացին, գնալուց էլ ասին, որ հէ- քուց փող կըբերեն որթիկներն էլ, լորերն էլ, ուկերն էլ, խալիչեքն էլ կառնեն:

Սիրոն ըտուցը ճամբու դրեց, էրկու ձի առավ, կնգա խետ խե- ձան ձիանքը ու փախսան հուրիշ քաղաք: Թո ըտոնք էթան մե քա- ղաք արբեն, մենք խարար տանք քոսակներից:

Քոսակները որ զուռնեն առան, շուտ փախսան, որ Սիրոն չըփոշ- մանի: Կարող ա պատահի, որ ետո կնգա խետ վիճեն, փոշմանի, հետևներիցը զա: Ճամբեն ծոփին, հուրիշ ճամբով գացին:

—Էտ Սրոն,—ասավ ջոչ քոսեն,—խսկական ախմախ ա: Էս տե- սակ զուռնով մարթ օրական խինգ հազար մանեթ կաշխատա, հինքը բերեց խինգ հազարի տվեց:

—Հեքուց էլ գանք, իշքան կով, որթիկ, դագ, խալիչա ունի, ձեռ-նից առնենք,—ասավ միշնեկ քուեն:

—Ոնց անենք, որ մեր տված փողն էլ ձեռնից առնենք,—ասավ պստի քուեն:

—Եթանք մտածենք, խելք խելքի տանք, հըմմեն բան լավ կըլ-նի,—ասավ մեծ քուեն:

Խոսալով գացին, խասան քաղաքը, զուռնեն ջոչ քուեն տարավ հիրան տունը: Որոշին հէքսի օրը քեֆ կազմակերպեն: Քեֆին կը-կանչեն թաքավորին, վազիրին, հիրանց հընդանիքով: Դատավորին ու քաղաքապետին ու մե քանի հարուստ վաճառականների էլ կը-հրավիրեն ու նշան կըտան զուռնի զորութունը: Թե բան ա, թաքավո-րը աշկ դնա, առնի, գինը կըդնենք հարիր հազար թուման: Թաքավոր ա, Հո հիրա չերից չի տալում ա, ժողովրթի հարգ ա, թո էլի հավլցնա: Ժողովուրթը չի մեռնի, կարի, թո մեշու էլ նեղութուն քաշա:

Էս որոշումով հիրկուն ամմեքը գնաց հիրա տունը: Հառավոտ սկսին պաղրաստութուն տենալ: Ամմեքը իրեք հազար մանեթ դրին քեֆի խըմար:

Ջոչ քոսի զալը զարթարեցին, ճեսօրին էլ ջոչ քոսին հղկեցին թաքավորին ու վազիրին հրավիրելու:

Դու մի ասա, հենց էտ օրը հարևան երգիր թաքավորը էկեր էր էս երգը թաքավորին դոնախ:

Ջոչ քոսեն որ գնաց պալատը, հայդնին, որ այսինչ թաքավորն էլ ա էկե, քոսեն հավելի ուրիշավ: Զուռնեն հավելի թանգ կըծախ-վի, այ բախստ:

Ներս մտավ, էրկու թաքավորին էլ զլոխ տվեց, կայնավ:

—Քոսա', ի՞նչ խնմիրք ունես, ասա', իրավունք ա, —ասավ թաքավորը:

—Թաքավորնե՛րն ապրած կենան, —ասավ քոսեն, —ես էկեր եմ, որ ձեզի ու մեծ վազիրին հրավիրեմ իմ տունը, մենք՝ իրեք քո-սակներս, որոշեր ենք ձեզի թաքավորավյել պատիվ տանք, մեկ էլ մե զարմանք բան կա, ուզում ենք, որ դուք ձեր աշկով տենաք, զարմանաք, դուք էտենց բան չեք տեսե:

—Էտ ի՞նչ ա, քոսա', որ դու տեսեր ես, թաքավորները չեն տե-սե, —նեղացած ասավ դոնախ թաքավորը:

—Զարմանալի զուռնայա, թաքավո՛րն ապրած կենա:

—Զուռնեն զուռնայա, զարմանալի զուռնե՞ն ինչ ա:

—Կըգաք կըտենաք, թաքավո՛րն ապրած կենա:

—Լա՛վ, —ասին թաքավորները, —ժամը խինոքին կըգանք:

Քոսեն զլոխ տվեց ու եռացավ, էկավ տուն, միջուսներին էլ հի-մաց տվեց, որ ժամը ուղիղ խնդին գան, թաքավորներն էլ են գալու:

Լավ կանեն, որ մեշու թաքավորներից չուտ գան, որ թաքավորները գան, զալը լինքը տենան:

Ժամը խինգին թաքավորները էկան: Զալը լինքն էր մեծամեծներով: Բոլորը թաքավորներին գորս տվին: Թաքավորները նստան, ետո իրավունք տվին, որ իշխաններն էլ նստեն: Եփ սկսին քեֆ-ուրախութունը, քոսեքը կանչին հիրանց կնանիքին ու կայնցրին ժողովրթի հառեջը: Զոչ քոսեն խանեց դանակը ու հիրա կնզա վիզը կղբեց: Որ զոչ քոսեն հիրան անելիքն արավ, էն մեկէլներն էլ հիրանց կնանիքին մորթին: Ըստեղի հաֆկվածների քեֆը խարամ հելավ, հըմա իրեք քոսեն կայնե ու ծծում են, կասես, հեջ բան չի հելե:

Թաքավորները հիրար հերես հիշկացին: Տեղական թաքավորը ջղայնութունից կարմրեր էր, հրամայեց դահիճ կանչին: Դահիճները բալթեքը ձեռներին մտան զալը: Ժողովուրթն հիրար էր խառնվե, զոռում-զոչում ին, որ թաքավորի հրամանը լսացին, փախան ամմեքը մե յան: Դահիճները ներս մտան թե չէ, հիշկացին թաքավորի հերեսը:

Թաքավորն ասավ.—իրեք քոսին էլ դո՞ւս բերեք, հըմա հիրանց շեման վրեն իրեքի էլ զլուսը կղբե՛ք:

Զոչ քոսեն ծիծաղելով ասավ.—թաքավո՞րն ապրած կենա, մի՛ վուզցի: Զարմանքը հընց ըտու մեշն ա: Հիմի իրեքին էլ կըսախծունք:

Թաքավորը մե հրոպե զարմացավ, ետո խառցուց.—Մեռելների՞ն կըսախծուր:

—Դե իհարգե, —ասին քոսեքը:

—Ո՞նց կըսախծուր, —ասավ թաքավորը:

—Հիմի կըտենաս, թաքավո՞ր, հիմի: Թո էս հուրիշ երգրի թաքավորը տենաս, որ մեր երգրումը մեռելներին սախծնում են, հըմա հիրանց երգրումը հըլա բանից խարար չեն:

Էս որ ասավ, զոչ քոսեն ծոցից խանեց զուռնեն, հիրա մորթուկ կնզա զլուսը ուղղեց տեղը, «Հայր մեր» ասավ ու զուռնեն դրեց հետևից, փչեց: Փչեց, փչեց, կնիկը տեղից հիրար չի գալում:

Մե թափուկ տվեց ու ասավ.—Դե հելի՛, շա՞ն կնիկ, էլ ի՞նչ ես նազ անում:

Մեկէլ քոսեքի սիրտը կածկած հընգավ, զուռնեն վերցին, հիրանք էլ զրին հիրանց կնզա հետևին ու փշին:

Փչում են, փչում, է՛, մեռելը զուռնով կըլավնա՞:

Թաքավորն հավելի ջղայնացավ:

—Տո՛, էս ավազակները մկա էլ մեզի՞ են ձեռ առնում, դահիճ, զլուսները թոցրե՛ք:

Ըստոնց ըապանին, ժողովուրթն ազատվավ: